Վերլուծվել են մեկ մանկապարտեզ ունեցող համայնքների մեկական և երկուական խմբերով մանկապարտեզների ցուցանիշները: Մասնավորապես, սաների ընդհանուր և միջին քանակը, հաստիքների միջին քանակը, միջին տարեկան բյուջեն:

Մեկ խումբ ունեցող մանկապարտեզներ


Ստացված տվյալները վկայում են, որ մեկ խումբ ունեցող մանկապարտեզներում հաստիքների քանակի տարբերությունները չեն կարող պայմանավորված լինել սաների քանակով:

Մասնավորապես՝

| Համայնք | Սաների քանակ | Հաստիքների քանակ |
|-------------|--------------|------------------|
| Խաչթառակ | 25 | 13 |
| Այգեպար | 25 | 6 |
| Հայանիստ | 28 | 13 |
| գ. Լեռանձոր | 10 | 6 |
| Արևիկ | 35 | 8 |
| Գորայք | 14 | 3 |
| Չորագյուղ | 15 | 2 |

Համայնքներում գործող միակ մանկապարտեզների համար, որոնք ունեն 1-ական խումբ հաստիքների քանակը ըստ սաների քանակի պատկերված է գծապատկեր 24-ում:

Գծապատկեր 24



Մեկ խումբ ունեցող մանկապարտեզների համար ցուցանիշերն են՝

| | |
|--------------------------|-------------|
| Մանկապարտեզների քանակ | 84 |
| Սաների ընդհանուր թիվ | 2018 |
| Սաների միջին թիվ | 24.02 |
| Հաստիքների միջին թիվ | 5.8 |
| Միջին տարեկան բյուջե | 6922.087 |
| Ընդհանուր տարեկան բյուջե | 519,156,556 |

Առաջարկվում է այն համայնքներում, որտեղ գործում է միայն մեկ մանկապարտեզ, որն ունի միայն մեկ խումբ, սահմանել հաստիքների նորմատիվներ, ընդ որում մի տարբերակով հաստիքների թույլատրելի քանակը կազմում է **6 հաստիք**, ինչը նույնիսկ ավելին է, քան այդ մանկապարտեզներում ստացված փաստացի միջին ցուցանիշը՝ 5.8, իսկ մյուս տարբերակով առաջարկվում է նման մանկապարտեզներում սահմանել **8.5 հաստիք** նորմատիվը, որը ավելի տրամաբանական է, քանի որ ներառում է հիմնական բոլոր անհրաժեշտ հաստիքները:

Այստեղ հնարավոր են երկու տարբերակներ.

Տարբերակ 1. Բոլորը հետևում են սահմանված նորմատիվներին, այսինքն ավելի շատ հաստիքներ ունեցող մանկապարտեզները կրճատում են իրենց հաստիքները, իսկ ավելի քիչ հաստիքներ ունեցողները՝ ավելացնում են նոր հաստիքներ իրենց մոտ:

Տարբերակ 2. Նորմատիվին հետևում են միայն նորմատիվից ավելի շատ հաստիք ունեցող մանկապարտեզները, իսկ ավելի քիչ հաստիք ունեցողները թողնում են իրենց մոտ հաստիքները անփոփոխ:


Ներկայացնենք հաշվարկները այս երկու տարբերակներով 6 հաստիք և 8.5 հաստիք նորմատիվների համար առանձին-առանձին:

Տարբերակ 1, 6 հաստիք

Այն դեպքում, եթե բոլոր մանկապարտեզները պահանջված **6 հաստիք** պահեն (այն մանկապարտեզները, որոնք ունեն ավելի քիչ հաստիքներ ավելացնեն իրենց մոտ նոր հաստիքներ, իսկ այն մանկապարտեզները, որոնք ունեն ավելի շատ հաստիքներ՝ պակասեցնեն դրանք), ապա տարեկան **լրացուցիչ ծախսերը (կորուստը) կկազմեն՝ 21,181,300 դրամ:**

Տարբերակ 2, 6 հաստիք

Եթե մեկ խումբ ունեցող մանկապարտեզներում պահանջվի սահմանել **6 հաստիքից ոչ ավել** (այսինքն միայն 6-ից ավել հաստիք ունեցող մանկապարտեզները իջեցնեն հաստիքների քանակը մինչև 6, իսկ ավելի քիչ հաստիք ունեցողները՝ թողնեն իրենց մոտ հաստիքները անփոփոխ), ապա հաստիքների կրճատման արդյունքում կառաջանա տարեկան **47,492,030 դրամի չափով խնայողություն:**



Մյուս տարբերակով առաջարկվում է նման մանկապարտեզներում սահմանել **8.5 հաստիք** նորմատիվը, որը ավելի տրամաբանական է, քանի որ ներառում է հիմնական բոլոր անհրաժեշտ հաստիքները:


Տարբերակ 1, 8.5 հաստիք

Այն դեպքում, եթե բոլոր մանկապարտեզները պահանջված **8.5 հաստիք** պահեն (այն մանկապարտեզները, որոնք ունեն ավելի քիչ հաստիքներ ավելացնեն իրենց մոտ նոր հաստիքներ, իսկ այն մանկապարտեզները, որոնք ունեն ավելի շատ հաստիքներ՝ պակասեցնեն դրանք), ապա տարեկան **լրացուցիչ ծախսերը (կորուստը) կկազմեն 179,119,000 դրամ:**

Տարբերակ 2, 8.5 հաստիք

Եթե մեկ խումբ ունեցող մանկապարտեզներում պահանջվի սահմանել **8.5 հաստիքից ոչ ավել** (այսինքն միայն 8.5-ից ավել հաստիք ունեցող մանկապարտեզները իջեցնեն հաստիքների քանակը մինչև 8.5, իսկ ավելի քիչ հաստիք ունեցողները՝ թողնեն իրենց մոտ հաստիքները անփոփոխ), ապա հաստիքների կրճատման արդյունքում կառաջանա տարեկան **13,811,140 դրամի չափով խնայողություն:**

Պետք է նշել, որ ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ հաստիքների խելամիտ նորմատիվը **8.5** է մեկ խմբի համար, քանի որ այս դեպքում հաստիքացուցակում ներառված են բոլոր անհրաժեշտ մասնագետները:



Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ինչպես հաստիքների փոփոխության արդյունքում առաջացող հավելյալ ծախսերը և խնայողությունները, այնպես էլ նոր առաջացող և կրճատվող հաստիքների քանակները՝ երկու դեպքերի համար (6 և 8.5 հաստիք), երկու տարբերակներով:


| | Տարեկան խնայողություն | Պակասող հաստիքների քանակ |
|----------------------|------------------------------|--|
| 6 հաստիք | -21,181,300 | -16.63 (այսքան նոր հաստիք պետք է ստեղծել) |
| 6 հաստիքից ոչ ավել | 47,492,030 | 71.37 (այսքան հաստիք պետք է կրճատել) |
| 8.5 հաստիք | -179,119,000 | -226.5 (այսքան նոր հաստիք պետք է ստեղծել) |
| 8.5 հաստիքից ոչ ավել | 13,811,140 | 21.5 (այսքան հաստիք պետք է կրճատել) |

Երկու խումբ ունեցող մանկապարտեզներ

Ստացված տվյալները վկայում են, որ երկու խումբ ունեցող մանկապարտեզներում հաստիքների քանակի տարբերությունները չեն կարող պայմանավորված լինել սաների քանակով:

Մասնավորապես՝

| Համայնք | Սաների թիվ | Հաստիքների թիվ |
|-----------|------------|----------------|
| Գետահովիտ | 50 | 14 |
| Կոթի | 52 | 5 |
| Դալար | 50 | 24 |
| Բասեն | 60 | 8 |
| Դալարիկ | 60 | 21 |
| Նորակերտ | 45 | 20 |
| Լճափ | 45 | 6 |



Երկու խումբ ունեցող մանկապարտեզների ցուցանիշներն են՝

| | |
|--------------------------|---------------|
| Մանկապարտեզների քանակ | 97 |
| Սաների ընդհանուր թիվ | 5111 |
| Սաների միջին թիվ | 52.69 |
| Հաստիքների միջին թիվ | 12.47 |
| Միջին տարեկան բյուջե | 12,429,280 |
| Ընդհանուր տարեկան բյուջե | 1,143,494,000 |

Առաջարկվում է այն համայնքներում, որտեղ գործում է միայն մեկ մանկապարտեզ, որն ունի երկու խումբ, սահմանել հաստիքների նորմատիվներ, ընդ որում մի տարբերակով հաստիքների թույլատրելի քանակը կազմում է **11 հաստիք**, ինչը նույնիսկ ավելին է, քան այդ մանկապարտեզներում ստացված փաստացի միջին ցուցանիշը՝ 12.47, իսկ մյուս տարբերակով առաջարկվում է նման մանկապարտեզներում սահմանել **12.5 հաստիք** նորմատիվը:

Այստեղ հնարավոր են երկու տարբերակներ.

Տարբերակ 1. Բոլորը հետևում են սահմանված նորմատիվներին, այսինքն ավելի շատ հաստիքներ ունեցող մանկապարտեզները կրճատում են իրենց հաստիքները, իսկ ավելի քիչ հաստիքներ ունեցողները՝ ավելացնում են նոր հաստիքներ իրենց մոտ:

Տարբերակ 2. Նորմատիվին հետևում են միայն նորմատիվից ավելի շատ հաստիք ունեցող մանկապարտեզները, իսկ ավելի քիչ հաստիք ունեցողները թողնում են իրենց մոտ հաստիքները անփոփոխ:


Ներկայացնենք հաշվարկները այս երկու տարբերակներով 11 հաստիք և 12.5 հաստիք նորմատիվների համար առանձին-առանձին:

Տարբերակ 1, 11 հաստիք

Այն դեպքում, եթե բոլոր մանկապարտեզները պահանջված **11 հաստիք** պահեն (այն մանկապարտեզները, որոնք ունեն ավելի քիչ հաստիքներ ավելացնեն իրենց մոտ նոր հաստիքներ, իսկ այն մանկապարտեզները, որոնք ունեն ավելի շատ հաստիքներ՝ պակասեցնեն դրանք), ապա կառաջանան **խնայողություններ 79,513,640 դրամի չափով տարեկան:**

Տարբերակ 2, 11 հաստիք

Եթե երկու խումբ ունեցող մանկապարտեզներում պահանջվի սահմանել **11 հաստիքից ոչ ավել** (այսինքն միայն 11-ից ավել հաստիք ունեցող մանկապարտեզները իջեցնեն հաստիքների քանակը մինչև 11, իսկ ավելի քիչ հաստիք ունեցողները՝ թողնեն իրենց մոտ հաստիքները անփոփոխ), ապա հաստիքների կրճատման արդյունքում կառաջանա տարեկան **164,539,971 դրամի չափով խնայողություն:**




Տարբերակ 1, 12.5 հաստիք

Այն դեպքում, եթե բոլոր մանկապարտեզները պահանջված **12.5 հաստիք** պահեն (այն մանկապարտեզները, որոնք ունեն ավելի քիչ հաստիքներ ավելացնեն իրենց մոտ նոր հաստիքներ, իսկ այն մանկապարտեզները, որոնք ունեն ավելի շատ հաստիքներ՝ պակասեցնեն դրանք), ապա նոր հաստիքների ստեղծման արդյունքում կառաջանան լրացուցիչ ծախսեր (կորուստ) տարեկան **31,814,600 դրամի չափով**:

Տարբերակ 2, 12.5 հաստիք

Եթե երկու խմբանոց մանկապարտեզներում պահանջվի պահել 12.5 հաստիքից ոչ ավել (այսինքն միայն 12.5-ից ավել հաստիք ունեցող մանկապարտեզները իջեցնեն հաստիքները մինչև 12.5, իսկ ավելի քիչ հաստիք ունեցողները՝ թողնեն իրենց մոտ հաստիքները անփոփոխ), ապա հաստիքների կրճատման արդյունքում կառաջանա տարեկան **164,539,971 դրամի չափով խնայողություն**:

Պետք է նշել, որ ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ հաստիքների խելամիտ նորմատիվը **12.5 է**, քանի որ 11-ի դեպքում առաջանում է բավականին մեծ գործազրկություն և սոցիալական լարվածություն:



Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ինչպես հաստիքների փոփոխության արդյունքում առաջացող հավելյալ ծախսերը և խնայողությունները, այնպես էլ նոր առաջացող և կրճատվող հաստիքների քանակները՝ երկու դեպքերի համար (11 և 12.5 հաստիք), երկու տարբերակներով:

Այսպիսով՝

| | Տարեկան խնայողություն | Պակասող հաստիքների քանակ |
|---------------------------|----------------------------------|---|
| 11 հաստիք | 79,513,640 | 142 (այսքան հաստիք պետք է կրճատել) |
| 11-ից ոչ ավել հաստիք | 164,539,971 | 244 (այսքան հաստիք պետք է կրճատել) |
| 12.5 հաստիքի | -31,814,600 | -3 (այսքան նոր հաստիք պետք է ստեղծել) |
| 12.5-ից ոչ ավել հաստիք | 109,554,122 | 167 (այսքան հաստիք պետք է կրճատել) |

Հաշվարկները կատարված են մարզերի կտրվածքով մանկապարտեզներում մեկ աշխատողին հասնող միջին տարեկան աշխատավարձով:

Մանկապարտեզների միավորման արդյունքների գնահատում

2 և ավել մանկապարտեզ ունեցող համայնքներում:

Գնահատումը իրականացվել հաշվի առնելով միավորման հնարավոր չորս տարբերակներ:

Առաջինը տարբերակով երկու և ավելի մանկապարտեզ ունեցող համայնքներում մեկ մանկապարտեզ փակվում է՝ սաների հետագա տեղաբաշխմամբ նույն համայնքի մյուս մանկապարտեզում(ներում):

Երկրորդ տարբերակով երկու և ավել մանկապարտեզ ունեցող համայնքներում ոչ մի մանկապարտեզ չի փակվում, սակայն դրանք սկսում են գործել մեկ ՀՈԱԿ-ի ներքո:

Երրորդ տարբերակով հաշվի է առնվում խմբերի խտությունը: Մասնավորապես, եթե խմբերը բավականաչափ խիտ են, ապա տվյալ համայնքում ենթադրվում է միայն մեկ մանկապարտեզի կրճատում: Իսկ, եթե կան ոչ խիտ մանկապարտեզներ, (1 խմբում միջինում 18 սանից պակաս), ապա կրճատվում են ոչ խիտ մանկապարտեզները, քանի դեռ դրանց թիվը չի գերազանցում համայնքում գործող մանկապարտեզների 15 տոկոսը:

Չորրորդ տարբերակով հաշվի է առնվում խմբերի խտության նկատմամբ 25-30 սանի օրենքով նախատեսված պահանջը, այսինքն փակվում են այն մանկապարտեզները, որտեղ խմբերի խտությունը **փոքր է 25-ից**: Միննույն ժամանակ, **մինչև 300 սան** ունեղոց մանկապարտեզները միավորվում են մեկ ՀՈԱԿ-ի ներքո՝ պահպանելով իրենց շենքերը և ոչ ադմինիստրատիվ աշխատակազմը:

Առաջին տարբերակ:

Առաջին դեպքում ենթադրվում է, որ բոլոր մանկապարտեզների շենքերը այլևս նույն նպատակով չեն շահագործվի, և հետևաբար դրանց համար նախատեսված պահպանման ծախսեր կխնայվեն: Ենթադրվում է նաև, որ բացի խումբը սպասարկող հիմնական անձնակազմից (երկու հաստիք յուրաքանչյուր խմբին՝ դաստիարակ և դայակ), մնացած անձնակազմից ոչ մեկը չի պահպանի իր աշխատանքը:

Հաշվի առնված չեն հետևյալ հանգամանքները՝

- Որ խմբերը կկոպլեկտավորվեն, այսինքն՝ հնարավոր է որ մի խմբի երեխաների մի մասը, կամ լիովին միանա մեկ այլ մանկապարտեզում նույն տարիքային խմբի առանց նոր խմբի առաջացման:
- Որ խմբերի քանակի ավելացման հետ զուգահեռ կարող է առաջանալ նոր պարտադիր ոչ մանկավարժական հաստիքների կարիք:
- Որ կարող է հնարավոր չլինել խումբը տեղափոխել մեկ այլ մանկապարտեզ կոմպլեկտացիայի (մանկապարտեզի շենքի հզորության) պատճառով:
- Որ կարող են առաջանալ նոր տարածքի (գործող մանկապարտեզների մի մասի, մասնաշենքի և այլն) շահագործման և դրա հետ կապված վերանորոգման հարցեր
- Որ հեռավորությունները կարող են խոչընդոտ հանդիսանալ երեխաներին մանկապարտեզ տանելու համար:
- Որ մեկ համայնքում կարող է անհրաժեշտություն առաջանալ (կամ հնարավոր լինել) մեկից ավելի մանկապարտեզի կոմպլեկտացիայի հարց:
- Որ հնարավոր են տրամադրված տվյալների անհամապատասխանություններ իրական տվյալների հետ:

Հաշվարկը կատարված է հետևյալ տրամաբանությամբ՝

- Բոլոր մանկապարտեզները ունեն նույն կոպլեկտացիան, կամ նույն հնարավորությունները, և, հետևաբար, համայնքի այլ ծախսերը ամբողջովին հավասարապես են բաշխվում (անկախ երեխաների կամ խմբերի քանակից):
- Բոլոր աշխատատողները համայնքում մանկապարտեզների համար նախատեսված աշխատավրձի ֆոնդով հաշվված միջին աշխատավարձ են ստանում:
- Մննդին ուղղված ողջ ծախսը պահպանվում է:
- Մեկ խմբին հասնում է 2 հաստիք՝ դաստիարակ և դայակ:
- Կրճատվում է միայն մինիմալ խնայողությունն առաջացնող (հիմնականում մինիմալ խմբերի քանակով) մանկապարտեզը:

Երկրորդ տարբերակ:

Երկրորդ դեպքում ենթադրվում է, որ ոչ մի մանկապարտեզ չի փակվում և շենքերը շարունակում են շահագործվել նույն ձևով: Հիմնական խնայողությունները այստեղ կառաջանան որոշ հաստիքների (ադմինիստրատիվ աշխատակազմի) կրճատումից:

Դա կվերաբերվի հաշվապահությանը, տնօրեններին, գործավարներին: Ընդհանուր առմամբ ենթադրվել է, որ յուրաքնչյուր մանկապարտեզում կկրճատվի երեք հաստիք համայնքի մանկապարտեզների աշխատավարձի ֆոնդով հաշվարկված միջին աշխատավարձով: Սա պայմանավորված է նրանով, որ ընդհանրապես տնօրենները միջինից ավելի բարձր են վարձատրվում, հաշվապահությունը կարող է կատարվել (կամ հաճախ կատարվում է) կես դրույքով:

Եվս մեկ դրույք նախատեսված այլ հնարավոր կրճատումների համար՝ հաշվետար-գանձապահ, բուժքույր, տնտեսվար, գործավար:

Առաջին և երկրորդ տարբերակներով մանկապարտեզների միավորման դեպքում առաջացող խնայողությունները ըստ մարզերի ներկայացված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5:

| | 2 և ավել մանկապարտեզ ունեցող համայնքների քանակը | Համայնքում ընդհանուր խնայողությունը, երբ 1 մանկապարտեզ է փակվում (հազար դրամ) | Համայնքում ընդհանուր խնայողությունը, երբ բոլոր մանկապարտեզները գործում են մեկ ՀՈԱԿ-ի ներքո (հազար դրամ) |
|-----------------|---|---|--|
| Արագածոտն | 4 | 43738.4 | 15663.45 |
| Արարատ | 4 | 61142.25 | 38304.88 |
| Արմավիր | 4 | 48884.7 | 56468.34 |
| Գեղարքունիք | 7 | 73673 | 38472.89 |
| Լոռի | 7 | 58219.41 | 59331.72 |
| Կոտայք | 4 | 50897.06 | 65639.59 |
| Շիրակ | 3 | 30788.88 | 71858.16 |
| Սյունիք | 5 | 35829.35 | 76233.42 |
| Վայոց Ձոր | 3 | 32249.39 | 10086.69 |
| Տավուշ | 4 | 34992.35 | 31804.92 |
| Ընդամենը | 45 | 470414.79 | 463864.06 |

Երրորդ տարբերակ:

Հաշվի առնելով մանկապարտեզների միջին խտությունը՝ 18, գնահատված է միջինից ցածր խտություն ունեցող մանկապարտեզների փակումը և սաների տեղաբաշխումը ավելի խիտ մանկապարտեզներ՝ լրացուցիչ խմբերի առաջացմամբ:

Երրորդ տարբերակով մանկապարտեզների միավորման դեպքում առաջացող խնայողությունները ըստ մարզերի ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2:

| | 1-ից ավել մանկապարտեզ ունեցող համայնքների քանակը | Ոչ խիտ մանկապարտեզների փակման արդյունքում առաջացած խնայողությունը (հազար դրամ) |
|------------------|--|--|
| Արագածոտն | 4 | 43,738.4 |
| Արարատ | 4 | 61,142.25 |
| Արմավիր | 4 | 70,092.091 |
| Գեղարքունիք | 7 | 73,673 |
| Լոռի | 7 | 66,855.74 |
| Կոտայք | 4 | 75,137.97 |
| Շիրակ | 3 | 70,315.3 |
| Սյունիք | 5 | 42,713.76 |
| Վայոց Ձոր | 3 | 32,249.39 |
| Տավուշ | 4 | 43,953.9 |
| Ընդհանուր | 45 | 579,871.801 |

Չորրորդ տարբերակ

Հաշվի է առնվել խմբերի խտության նկատմամբ 25-30 սանի օրենքով նախատեսված պահանջի ստորին շեմը: Իսկ ՀՈԱԿ-ների միավորման համար ընդունվել է 1 ՀՈԱԿ-ի հաշվով 300 սան առավելագույն քանակը:

Մարզերում մանկապարտեզների միավորման հետևանքով հնարավոր խնայողությունները

| Մարզ (1) | 1-ից ավել մանկ. ունեցող համայնքների քանակը (2) | Համայնք (3) | Գործող մանկ քանակը (4) | Կրճատվող մանկ թիվը (5) | Կրճատումից առաջացող խնայող. (6) | Կրճատումից խնայող. ըստ մարզերի (7) | Առաջարկվող ՀՈԱԿ-ների քանակը (8) | Կրճատումից հետո ՀՈԱԿ-ների միացման հետևանքով առաջացող խնայողությունները (9) | Ընդհանուր խնայողությունը (10) |
|-----------|--|-------------|------------------------|------------------------|---------------------------------|------------------------------------|---------------------------------|--|-------------------------------|
| Արագածոտն | 4 | Աշտարակ | 4 | 0 | 0 | 0 | 2 | 13,501,620 | 13,501,620 |
| | | Ապարան | 2 | 0 | 0 | | 1 | | |
| | | Թալին | 2 | 0 | 0 | | 1 | | |
| | | Օշական | 2 | 0 | 0 | | 1 | | |
| Արարատ | 4 | Արտաշատ | 7 | 0 | 0 | 0 | 3 | 25,888,300 | 28,309,490 |
| | | Մասիս | 6 | 0 | 0 | | 2 | | |
| | | Արարատ | 3 | 0 | 0 | | 2 | | |
| | | Վեդի | 3 | 0 | 0 | | 2 | | |
| Արմավիր | 4 | Արմավիր | 12 | 2 | 18,934,810 | 18,934,810 | 4 | 32,575,640 | 51,510,450 |
| | | Էջմիածին | 8 | 0 | 0 | | 4 | | |

| | | | | | | | | | |
|-------------|---|------------|----|-----------|------------|------------|------------|-------------|------------|
| | | Մեծամոր | 3 | 0 | 0 | | 2 | | |
| | | Փարաքար | 2 | 0 | 0 | | 1 | | |
| Գեղարքունիք | 7 | Գավառ | 5 | 0 | 0 | 0 | 2 | 28,910,150 | 28,910,150 |
| | | Սևան | 5 | 0 | 0 | | 3 | | |
| | | Մարտունի | 4 | 0 | 0 | | 2 | | |
| | | Նորատուս | 2 | 0 | 0 | | 1 | | |
| | | Ճամբարակ | 2 | 0 | 0 | | 1 | | |
| | | Սարուխան | 2 | 0 | 0 | | 1 | | |
| | | Վարդենիս | 2 | 0 | 0 | | 1 | | |
| | | Լոռի | 7 | Վանաձոր | 20 | | 0 | | |
| Ալավերդի | 6 | 1 | | 4,834,026 | 2 | | | | |
| Ստեփանավան | 4 | 1 | | 8,734,783 | 1 | | | | |
| Թումանյան | 3 | 1 | | 3,973,750 | 1 | | | | |
| Տաշիր | 3 | 0 | | 0 | 2 | | | | |
| Սյիտակ | 2 | 0 | | 0 | 1 | | | | |
| Օձուն | 2 | 0 | | 0 | 1 | | | | |
| Կոտայք | 4 | Հրազդան | 12 | 2 | 47,212,160 | 47,212,160 | 35,448,320 | 84,654,100 | |
| | | Արովյան | 9 | 0 | 0 | | | | 5 |
| | | Չարենցավան | 4 | 0 | 0 | | | | 2 |
| | | Նոր Գեղի | 3 | 0 | 0 | | | | 1 |
| Շիրակ | 3 | Գյումրի | 22 | 3 | 71,694,190 | 83,498,030 | 41,369,630 | 124,867,700 | |
| | | Արթիկ | 4 | 0 | 0 | | | | 2 |
| | | Ախուրյան | 3 | 1 | 11,803,850 | | | | 1 |
| Սյունիք | 5 | Կապան | 12 | 2 | 30,039,630 | 62,524,020 | 38,087,150 | 100,611,200 | |
| | | Գորիս | 11 | 2 | 16,820,310 | | | | 4 |

| | | | | | | | | | |
|------------------|---|-----------|------------|-----------|------------|--------------------|-----------|--------------------|--------------------------------|
| | | Տաթև | 5 | 2 | 7,876,200 | | 1 | | |
| | | Միսիան | 4 | 0 | 0 | | 2 | | |
| | | Տեղ | 3 | 1 | 7,787,892 | | 1 | | |
| Վայոց Ձոր | 3 | Եղեգնաձոր | 3 | 0 | 0 | 0 | 1 | 10,086,690 | 10,086,690 |
| | | Վայք | 2 | 0 | 0 | | 1 | | |
| | | Մալիշկա | 2 | 0 | 0 | | 1 | | |
| Տավուշ | 4 | Դիլիջան | 8 | 2 | 20,532,930 | 20,532,930 | 3 | 14,030,430 | 34,563,360 |
| | | Իջևան | 3 | 0 | 0 | | 2 | | |
| | | Բերդ | 2 | 0 | 0 | | 2 | | |
| | | Կողբ | 2 | 0 | 0 | | 1 | | |
| Ընդհանուր | | | 230 | 20 | | 250,244,510 | 99 | 278,965,980 | 533,625,370⁵ |

Այսպիսով, չորրորդ տարեբաժնով մարզերում մանկապարտեզների միավորման արդյունքում առաջացող հնարավոր խնայողությունները կկազմեն 533,625,370 դրամ:

⁵ 7-րդ և 9-րդ սյունների գումարը փոքր շեղումով (մոտ 3 մլն. դրամ) տարբերվում է 10-րդ սյունի գումարից՝ պայմանավորված այն բանով, որ մի քանի մանկապարտեզների խմբերի կոմպլեկտավորման հետևանքով կարող է առաջանալ մանկավարժական անձնակազմի հաստիքների կրճատում և համալրում:

Տավուշի մարզ

2 և ավել մանկապարտեզ ունեցող համայնքների վերլուծությունը Տավուշի մարզում ներկայացված է ստորև:

Իջևան քաղաքի մանկապարտեզների տվյալներ

| Հասցե | Անվ. | Խումբ | Սան | Հաստիք | Տարեկան բյուջե (հազար դրամ) | Տարեկան բյուջեի մեջ համայնքից հատկացվող գումար (հազար դրամ) | Սաների միջին քանակը խմբերում | Մեկ սանի հաշվով միջին ամսական ծախս |
|------------------------------|-------|-------|-----|--------|-----------------------------|---|------------------------------|------------------------------------|
| ք. Իջևան, Մայիսի 28-ի, թիվ 5 | թիվ 1 | 6 | 225 | 28 | 31385.0 | 26185.0 | 37.5 | 11,624 |
| ք.Իջևան, Բլբուլյան 5 | թիվ 5 | 4 | 116 | 24 | 26611.0 | 22211.0 | 29 | 19,117 |
| ք.Իջևան, Ղարազյոզյան 47 | թիվ 8 | 3 | 117 | 21 | 23534.0 | 19634.0 | 39 | 16,762 |
| Ընդամենը | | 13 | 458 | 73 | 81530 | 68030 | 35.23 | 14,834 |

Նույն մարզի նույն համայնքի սաների գրեթե նույն քանակությամբ մանկապարտեզներում հաստիքների քանակները, ինչպես նաև խմբերի քանակները տարբերվում են ` 117 սանը 3 խմբով է, իսկ 116 սանը` 4 խմբով է, ընդ որում հաստիքները տարբերվում են 3 ով:

Նոյեմբերյան քաղաքի մանկապարտեզների տվյալներ

| Հասցե | Անվ. | Խումբ | Սան | Հաստիք | Տարեկան բյուջե (հազար դրամ) | Տարեկան բյուջեի մեջ համայնքից հատկացվող գումար (հազար դրամ) | Մեկ սանի հաշվով միջին ամսական ծախս (հազար դրամ) | Սաների միջին քանակը խմբերում |
|-----------------------------|-------|-------|-----|--------|-----------------------------|---|---|------------------------------|
| ք.Նոյեմբերյան, փ.Երևանյան11 | թիվ 1 | 2 | 50 | 11 | 13155.0 | 10755.0 | 21.925 | 25 |
| ք.Նոյեմբերյան, փ.Տերյան11 | թիվ 2 | 4 | 127 | 17 | 21430.0 | 17230.0 | 14.061 | 31.75 |
| Ընդամենը | | 6 | 177 | 28 | 34585 | 27985.0 | 16,282 | 29,5 |

Բերդ քաղաքի մանկապարտեզների տվյալներ

| Հասցե | Անվ. | Խումբ | Սան | Հաստիք | Տարեկան բյուջե (հազար դրամ) | Տարեկան բյուջեի մեջ համայնքից հատկացվող գումար (հազար դրամ) | Մեկ սանի հաշվով միջին ամսական ծախս (հազար դրամ) | Սաների միջին քանակը խմբերում |
|------------------------------|-------------|-------|-----|--------|-----------------------------|---|---|------------------------------|
| ք.Բերդ, Հայկ Նահապետի 6 | Բերդի թիվ 2 | 9 | 254 | 36 | 36193.0 | 28573.0 | 12.954 | 28.22 |
| ք.Բերդ, Նելսոն Ստեփանյանի 13 | Բերդի թիվ 3 | 4 | 105 | 18 | 22750.0 | 19600.0 | 19.697 | 26.25 |
| Ընդամենը | | 13 | 359 | 54 | 58943.0 | 48173.0 | 14.926 | 27.61 |

Կողբ գյուղի մանկապարտեզների տվյալներ

| Հասցե | Անվ. | Խումբ | Սան | Հաստիք | Տարեկան բյուջե (հազար դրամ) | Տարեկան բյուջեի մեջ համայնքից հատկացվող գումար (հազար դրամ) | Մեկ սանի հաշվով միջին ամսական ծախս (հազար դրամ) | Սաների միջին քանակը խմբերում |
|-------------------------|-------------|-------|-----|--------|-----------------------------|---|---|------------------------------|
| գ. Կողբ, փողոց 17, շ.30 | Կողբի թիվ 1 | 2 | 60 | 19 | 14472.2 | 12488.2 | 26.800 | 30 |
| գ. Կողբ, փողոց 20, շ.4 | Կողբի թիվ 2 | 3 | 90 | 22 | 18789.9 | 15519.4 | 23.197 | 30 |
| Ընդամենը | | 5 | 150 | 41 | 33262.1 | 28007.6 | 24.639 | 30 |

Այստեղ կարելի է քննարկել մանկապարտեզների միավորման հարցը:

Դիլիջան քաղաքի մանկապարտեզների տվյալներ

| Հասցե | Անվ. | Խումբ | Սան | Հաստիք | Տարեկան բյուջե (հազար դրամ) | Տարեկան բյուջեի մեջ համայնքից հատկացվող գումար (հազար դրամ) | Սաների միջին քանակը խմբերում | Մեկ սանի հաշվով միջին ամսական ծախս |
|--------------------------------|-------|-------|-----|--------|-----------------------------|---|------------------------------|------------------------------------|
| ք. Դիլիջան, Գետափնյա 70/4 | Թիվ 1 | 6 | 171 | 28.75 | 39665.0 | 29279.2 | 28.5 | 19.330 |
| ք. Դիլիջան, Շահումյան փողոց 34 | Թիվ 2 | 6 | 140 | 28.75 | 37891.7 | 29280.0 | 23.33 | 22.555 |

| | | | | | | | | |
|--|----------------------------------|----|-----|-------|----------|----------|-------|--------|
| ք. Դիլիջան, Մուրավական փ.46 | Թիվ 3 | 5 | 120 | 25 | 31228.3 | 24000.0 | 24 | 21.686 |
| ք. Դիլիջան, Օրջոնիկիձեի փ. 63/1 | Թիվ 4 | 4 | 85 | 19.75 | 25089.1 | 19800.0 | 21.25 | 24.597 |
| ք. Դիլիջան, Զինվորական ավան | Թիվ 5 | 1 | 22 | 7.25 | 8990.4 | 7680.0 | 22 | 34.055 |
| ք. Դիլիջան, Կամո փող.42 | Թիվ 6 | 2 | 30 | 11 | 13746.4 | 11400.0 | 15 | 38.184 |
| ք. Դիլիջան, գ. Հաղարծին 1-ին փող, շենք 42 | Հաղարծն ի մանկապ արտեգ. | 2 | 68 | 17 | 23239.5 | 21014.3 | 34 | 28.480 |
| ք. Դիլիջան, գ.Թեղուտ, 6- րդ փող, շ. 17 | Թեղուտի մանկապ արտեգ | 2 | 42 | 12.5 | 17061.2 | 14240.3 | 21 | 33.852 |
| Ընդամենը | | 28 | 678 | 150 | 196911.0 | 156693.0 | 24.21 | 24.202 |

Ք.Դիլիջանում առկա է 28 մանկապարտեզ, ընդ որում, կա 1 մանկապարտեզ, որտեղ առկա է ընդամենը 1 խումբ (22 սան): Թիվ 1 և 2 մանկապարտեզներում 30 սանի տարբերությամբ գործում են 6-ական խմբեր, ընդ որում հաստիքների քանակը նույնն է:

Թիվ 3 և թիվ 4 կամ թիվ 6 մանկապարտեզների միավորման հարցը կարելի է քննարկել:

1 մանկապարտեզ ունեցող համայնքների վերլուծությունը Տավուշի մարզում:

Տավուշի մարզի 1 մանկապարտեզ ունեցող համայնքներ, որտեղ առկա է 1 խումբ:

| Հ/Հ | Համայնքների անվանումը | հասցե | Նախադպրոցական ուսումնական հաստատության անվանումը | Խմբերի քանակը | Սաների թիվը | Հաստիքների թիվը | Տարեկան բյուջե (հազար դրամ) | |
|-----|-----------------------|-----------------------------------|--|---------------|-------------|-----------------|-----------------------------|--|
| | | | | | | | Տարեկան բյուջեի մեծությունը | Տարեկան բյուջեի մեջ համայնքից հատկացվող ֆինանսավորման չափը |
| 1 | Սարիգյուղ | գ.Սարիգյուղ, 1փ 1, նրբ. 4 | <<Սարիգյուղի մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 1 | 30 | 8 | 6936.0 | 6036.0 |
| 2 | Խաշթառակ | գ.Խաշթառակ 9փ. .11շ. | <<Խաշթառակի մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 1 | 25 | 13 | 9700.0 | 8950.5 |
| 3 | Չինչին | գ.Չինչին, 10փ. 2տ. | <<Չինչինի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 1 | 19 | 4 | 4055.5 | 3455.5 |
| 4 | Պատավաքար | գ.Պատավաքար, փ.22, 2-րդ փակ., 2.1 | <<Պատավաքարի թիվ 1>> ՀՈԱԿ | 1 | 35 | 8 | 8650.6 | 7950.7 |
| 5 | Այգեպար | գ.Այգեպար, փ.2/5 | <<Այգեպարի թիվ 1 մանկապարտեզ>>ՀՈԱԿ | 1 | 25 | 6 | 5000.0 | 4500.0 |
| 6 | Չինարի | գ.Չինարի, փ.15/32 | <<Չինարիի մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 1 | 22 | 6 | 6740.0 | 6300.0 |
| 7 | Ն.Կ.Աղբյուր | գ.Ն.Կ.Աղբյուր, փ.3/28 | <<Ն.Կ.Աղբյուրի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 1 | 30 | 5 | 5100.0 | 4500.0 |

| | | | | | | | | |
|----|-----------------|-------------------------------------|-------------------------------------|---|------------|-----------|----------------|----------------|
| 8 | Վարագավան | գ. Վարագավան, փող.7, փակուղի 6, 2.1 | <<Վարագավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 1 | 21 | 4 | 4542.0 | 4122.0 |
| 9 | Պտղավան | գ. Պտղավան, փող.5, շենք 1 | <<Պտղավանի մսուր-մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 1 | 30 | 5 | 5771.5 | 5171.5 |
| 10 | Արճիս | գ. Արճիս փ5շենք5 | <<Արճիսի Մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 1 | 30 | 4 | 7245.0 | 6645.0 |
| 11 | Հաղթանակ | գ. Հաղթանակ, փ.4 | <<Հաղթանակի մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 1 | 25 | 4 | 5500.0 | 5000.0 |
| 12 | Այրում | ք. Այրում, Աբովյան 1 | Այրումի մանկապարտեզ՝ ՀՈԱԿ | 1 | 32 | 12 | 14596.1 | 10883.1 |
| 13 | Ոսկեվան | գ. Ոսկեվան, 6-րդ փող, 3-րդ փող, 2.3 | <<Ոսկեվանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 1 | 25 | 5 | 6900.0 | 6400.0 |
| | Ընդամենը | | | | 349 | 84 | 90736.7 | 79914.3 |

Նույն մարզի տարբեր համայնքներում 1 խումբ ունեցող սաների գրեթե նույն քանակությամբ մանկապարտեզներում հաստիքների քանակները գրեթե եռակի տարբերվում են՝ 30 սան ունեցող մանկապարտեզներում առկա հաստիքները տատանվում են 4-ից 12: Նույն պատկերը առկա է 25 սան ունեցող մանկապարտեզներում՝ այստեղ տատանումը կրկնակի է:

Տավուշի մարզի 1 մանկապարտեզ ունեցող համայնքներ, որտեղ առկա է 2 խումբ:

| | | | Նախադպրոցական ուսումնական հաստատության անվանումը | Խմբերի քանակը | Սաների թիվը | Հաստիքների թիվը | Տարեկան բյուջե (հազար դրամ) | |
|---|------------|----------------------------|---|---------------|-------------|-----------------|-----------------------------|--|
| | | | | | | | Տարեկան բյուջեի մեծությունը | Տարեկան բյուջեի մեջ համայնքից հատկացվող ֆինանսավորման չափը |
| 1 | Գանձաքար | 18 փող. 1 փկղ. 4 շենք | <<Գանձաքարի մանկապարտեզ >> ՀՈԱԿ | 2 | 63 | 16 | 18872.0 | 17690.0 |
| 2 | Գետահովիտ | գ. Գետահովիտ, փ. 1/6 | <<Գետահովիտի մանկապարտեզ >> ՀՈԱԿ | 2 | 50 | 14 | 14550.0 | 13050.0 |
| 3 | Աչաջուր | գ. Աչաջուր, փողոց 6 շենք 4 | „Աչաջրի մանկապարտեզ „ ՀՈԱԿ | 2 | 70 | 20 | 22310.0 | 21000.0 |
| 4 | Վ.Ծաղկավան | գ. Վ.Ծաղկավան, 5 փողոց 4 | <<Վ.Ծաղկավանի մանկապարտեզ >. ՀՈԱԿ | 2 | 30 | 6 | 4465.0 | 4150.0 |
| 5 | Մովսես | գ. Մովսես փող 5, տուն 31 | <<Մովսեսի Ժ. Խաչատրյանի անվան մանկապարտեզ >> ՀՈԱԿ | 2 | 37 | 9.5 | 9740.0 | 9000.0 |
| 6 | Չորաթան | գ. Չորաթան, 1 փողոց 17 | <<Չորաթանի մանկապարտեզ >. ՀՈԱԿ | 2 | 30 | 12 | 5800.0 | 5560.0 |

| | | | | | | | | |
|----|-----------------|--------------------------------------|-----------------------------------|---|------------|-------------|---------------|---------------|
| 7 | Նավուր | գ. Նավուր, 2-րդ փող, 4-րդ նրբ., տ. 8 | <<Նավուրի մանկապարտեզ >>ՀՈԱԿ | 2 | 38 | 8 | 7392.0 | 6000.0 |
| 8 | Տավուշ | գ.Տավուշ, 16փող. թիվ9 | <<Տավուշի մանկապարտեզ >>ՀՈԱԿ | 2 | 41 | 3.75 | 5540.0 | 5000.0 |
| 9 | Բագրատաշեն | գ.Բագրատաշեն, փ.1/22 | <<Բագրատաշենի մանկապարտեզ >> ՀՈԱԿ | 2 | 60 | 2 | 12400.0 | 11800.0 |
| 10 | Կոթի | գ. Կոթի 2 փող,շենք,7 | <<Կոթիի մանկապարտեզ >> ՀՈԱԿ | 2 | 52 | 5 | 12040.0 | 11000.0 |
| | Ընդամենը | | | | 471 | 96.3 | 113109 | 104250 |

Նույն մարզի տարբեր համայնքներում 2 խումբ ունեցող սաների գրեթե նույն քանակությամբ մանկապարտեզներում հաստիքների քանակները գրեթե կրկնակի տարբերվում են՝ 30 սանի դեպքում՝ 12 և 6 հաստիքներ, 50 սան՝ 14 և 5 հաստիքներ, 60 սան՝ 16 և 2 հաստիքներ, իսկ 70 սանի դեպքում հաստիքները կազմել են 20, մինչդեռ 63 սանի դեպքում՝ 16: Առկա է նաև հաստիքների նորմատիվներից պակաս քանակություն՝ 2, 3.75:

Տավուշի մարզի 1 մանկապարտեզ ունեցող համայնքներ, որտեղ առկա է 3 խումբ:

| Հ/Հ | Համայնքների անվանումը | հասցե | Նախադպրոցական ուսումնական հաստատության անվանումը | Խմբերի քանակը | Սաների թիվը | Հաստիքների թիվը | Տարեկան բյուջե (հազար դրամ) | |
|-----|-----------------------|---------------------------------------|--|---------------|-------------|-----------------|-----------------------------|--|
| | | | | | | | Տարեկան բյուջեի մեծությունը | Տարեկան բյուջեի մեջ համայնքից հատկացվող ֆինանսավորման չափը |
| 1 | Ազատամուտ | Գ. Ազատամուտ, 1-ին փ, թիվ 86. | <<Ազատամուտի մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 3 | 75 | 16 | 9770.0 | 9770.0 |
| 2 | Այգեհովիտ | Գ. Այգեհովիտ, 15փ. թիվ 2 | <<Այգեհովիտի մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 3 | 80 | 18 | 22150.0 | 19750.0 |
| 3 | Սևքար | Գ. Սևքար, 28 -րդ փող, 7-րդ շենք | <<Սևքարի մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 3 | 50 | 18 | 12250.0 | 13750.0 |
| 4 | Արծվաբերդ | Գ. Արծվաբերդ 4 փողոց շենք 4 | Արծվաբերդի թիվ 1 | 3 | 66 | 14 | 19770.0 | 15700.0 |
| 5 | Նորաշեն | Գ. Նորաշեն, 1փ 26 | <<Նորաշենի թիվ 1 մանկապարտեզ>> | 3 | 56 | 9 | 10620.0 | 9500.0 |
| 6 | Այգեձոր | Գ. Այգեձոր 1 փողոց, 1 փակուղի, տուն 1 | «Այգեձորի մանկապարտեզ» ՀՈԱԿ | 3 | 55 | 11 | 11000.0 | 10500.0 |
| 7 | Վ. Կ. Աղբյուր | Գ. Վ. Կ. Աղբյուր, փ. 9/24 | < Վ. Կ. Աղբյուրի թիվ 1 մանկապարտեզ >> ՀՈԱԿ | 3 | 48 | 13 | 11306.0 | 9656.0 |

| | | | | | | | | |
|---|-----------------|-------------------------|---|---|------------|------------|--------------|--------------|
| 8 | Բերդավան | գ.Բերդավան փ6 շենք17 | <<Բերդավանի մուր- մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 3 | 120 | 18 | 20400.0 | 18000.0 |
| | Ընդամենը | | | | 550 | 117 | 96866 | 88626 |

Նույն մարզի տարբեր համայնքներում 3 խումբ ունեցող մանկապարտեզներում հաստիքների քանակները էականորեն չեն տարբերվում, բացառությամբ 2 դեպքի, սակայն այստեղ էական տարբերվում են սաների քանակները՝ 48-ից մինչև 120 սաները բաժանված են 3 խմբերի: Նորաշենի թիվ 1 և Սևքարի մանկապարտեզներում հաստիքները կրկնակի տարբեր են, ընդ որում ավելի շատ են հաստիքները ավելի քիչ սան ունեցող մանկապարտեզում:

Սյունիքի մարզ

2 և ավել մանկապարտեզ ունեցող համայնքներ:

Կապան

| Հասցե | Անվ. | Խումբ | Սան | Հաստիք | Տարեկան բյուջե (հազար դրամ) | Տարեկան բյուջեի մեջ համայնքից հատկացվող գումարը (հազար դրամ) | Մեկ սանի հաշվով միջին ամսական ծախս (հազար դրամ) | Սաների միջին քանակը խմբերում |
|-------------------------|-------|-------|-----|--------|-----------------------------|--|---|------------------------------|
| ք Կապան, Շահումյան 20/1 | թիվ 1 | 6 | 165 | 28.3 | 37720.0 | 30840.0 | 19.1 | 27.5 |
| ք Կապան, Բաղաբերդ 11 | թիվ 2 | 5 | 119 | 25 | 31819.5 | 26779.5 | 22.3 | 23.8 |
| ք. Կապան, Շահումյան 42 | թիվ 4 | 7 | 185 | 34.1 | 43625.7 | 36227.0 | 19.7 | 26.4 |
| ք. Կապան, Բաղաբերդի 17 | թիվ 5 | 4 | 75 | 21.2 | 26290.4 | 23330.4 | 29.2 | 18.8 |
| ք Կապան, Մ. Պապյան 14 | թիվ 6 | 7 | 199 | 31.6 | 44189.0 | 36529.1 | 18.5 | 28.4 |
| ք Կապան, Գ.Նժդեհ26 | թիվ 7 | 6 | 140 | 27.8 | 38426.4 | 32206.4 | 22.9 | 23.3 |

| | | | | | | | | |
|---|--------|------|--------|-------|----------|----------|------|------|
| ք Կապան, Հ. Ավետիսյանի 3, Կավարտ, թաղամաս 1/3 | թիվ 8 | 6 | 116 | 30.8 | 38250.0 | 33230.0 | 27.5 | 19.3 |
| ք Կապան, Շահումյան 8 | թիվ 9 | 6 | 139 | 28.3 | 37423.8 | 31223.8 | 22.4 | 23.2 |
| ք Կապան, Շինարարների 10 | թիվ 10 | 4 | 102 | 24.2 | 28836.9 | 25336.9 | 23.6 | 25.5 |
| ք Կապան, Բարաբաթումբանական 2/1 | թիվ 11 | 1 | 15 | 7.8 | 9998.2 | 9131.6 | 55.5 | 15.0 |
| ք. Կապան, Հալիձոր 8 | թիվ 12 | 5 | 108 | 24 | 29409.0 | 25469.0 | 22.7 | 21.6 |
| ք. Կապան, Չորք 20 | թիվ 13 | 5 | 138 | 25 | 32665.0 | 26945.0 | 19.7 | 27.6 |
| Ընդամենը | | 62.0 | 1501.0 | 308.1 | 398653.9 | 337248.7 | 22.1 | 24.2 |

Թիվ 1, թիվ 7, թիվ 8 և թիվ 9 մանկապարտեզներում նույն 6-ական խմբերի առկայությամբ հաստիքները տարբեր են, ընդ որում ավելի քիչ սան ունեցող մանկապարտեզում՝ 116 սան, հաստիքները ավելի շատ են, քան ավելի շատ՝ 140 սան ունեցողում: Նույն պատկերն է 7-ական խումբ ունեցող թիվ 4 և թիվ 6 մանկապարտեզներում:

Թիվ 11 մանկապարտեզը նպատահարմար է միավորել, օրինակ, թիվ 5 մանկապարտեզի հետ:

Գորիս

| Հասցե | Անվ. | Խումբ | Սան | Հաստիք | Տարեկան բյուջե (հազար դրամ) | Տարեկան բյուջեի մեջ համայնքից հատկացվող գումարը (հազար դրամ) | Մեկ սանի հաշվով միջին ամսական ծախս (հազար դրամ) | Սաների միջին քանակը խմբերում |
|---------------------------------|------------|-------|-----|--------|-----------------------------|--|---|------------------------------|
| ք. Գորիս, Գուսան Աշոտի 30 | թիվ 1 | 5 | 143 | 22.5 | 30586.0 | 23786.0 | 17.8 | 28.6 |
| ք. Գորիս, Կոմիտասի 17 | թիվ 2 | 7 | 235 | 25.5 | 36652.0 | 26652.0 | 13.0 | 33.6 |
| ք. Գորիս, Գետափնյա 3 | թիվ 3 | 4 | 85 | 16.75 | 21616.0 | 17156.0 | 21.2 | 21.3 |
| ք. Գորիս, Բակունցի 56 | թիվ 4 | 3 | 61 | 16 | 17879.0 | 15079.0 | 24.4 | 20.3 |
| ք. Գորիս, Արզումանյան 5 | թիվ 5 | 4 | 88 | 17.75 | 22177.0 | 18393.0 | 21.0 | 22.0 |
| ք. Գորիս, Սյունիքի 179 | թիվ 6 | 4 | 93 | 16.75 | 20945.0 | 17368.0 | 18.8 | 23.3 |
| ք. Գորիս, Վանքի տափ 2 | թիվ 7 | 3 | 73 | 14.25 | 18266.0 | 14964.0 | 20.9 | 24.3 |
| գ. Քարահունջ, փողոց 11, շենք 33 | Քարահունջի | 2 | 36 | 10 | 8500.0 | 7500.0 | 19.7 | 18.0 |
| գ. Խնձորեսկ, փողոց 37, 34 շենք | Խնձորեսկի | 3 | 73 | 14 | 15150.0 | 12000.0 | 17.3 | 24.3 |

| | | | | | | | | |
|---|------------------|------|-------|-------|----------|----------|------|------|
| գ. Վերիշեն, 10-րդ փողոց, շենք 1 | Վերիշենի | 3 | 90 | 13 | 13789.4 | 13789.4 | 12.8 | 30.0 |
| գ. Ներքին Խնձորեսկ, Կենտ. ճան., թաղ. 4, տուն 21 | Ներքին Խնձորեսկի | 1 | 14 | 5 | 2576.8 | 2576.8 | 15.3 | 14.0 |
| Ընդամենը | | 39.0 | 991.0 | 171.5 | 208137.2 | 169264.2 | 17.5 | 25.4 |

Թիվ 3, 4, 5, 6 և 7 մանկապարտեզներում խմբերի բաժանումը նորմատիվներից ավել է, միննույն ժամանակ, կարելի է միավորել այդ մանկապարտեզները: Հաստիքների քանակը 3 խումբ ունեցող մանկապարտեզներում տատանվում է 13-16 հաստիքների մեջ:

Թիվ 3 և թիվ 4 կամ թիվ 7 մանկապարտեզները նպատահարմար է միավորել:

Տեղ

| Հասցե | Անվ. | Խումբ | Սան | Հաստիք | Տարեկան բյուջե (հազար դրամ) | Տարեկան բյուջեի մեջ համայնքից հատկացվող գումարը (հազար դրամ) | Մեկ սանի հաշվով միջին ամսական ծախս (հազար դրամ) | Սաների միջին քանակը խմբերում |
|------------------------------------|-----------|-------|-------|--------|-----------------------------|--|---|------------------------------|
| գ. Տեղ, փող.18/13 | Թիվ 1 | 3 | 65 | 8.5 | 8963.0 | 8963.0 | 11.5 | 21.7 |
| գ. Տեղ, Ս. Բարխուդարյանի փող. 11/1 | Թիվ 2 | 2 | 42 | 8.5 | 9725.0 | 9725.0 | 19.3 | 21.0 |
| գ. Շինուհայր | Կորնիձորի | 2 | 46 | 9.15 | 9800.0 | 9000.0 | 17.8 | 23.0 |
| Ընդամենը | | 7.0 | 153.0 | 26.2 | 28488.0 | 27688.0 | 15.5 | 21.9 |

Այստեղ 65 սանի դեպքում խմբերի բաժանումը 3-ի նորմատիվներով առաջարկածից շատ է և, միևնույն ժամանակ, Տեղ գյուղում կարելի է միավորել թիվ 1 և թիվ 2 մանկապարտեզները:

Տաթև

| Հասցե | Անվ. | Խումբ | Սան | Հաստիք | Տարեկան բյուջե (հազար դրամ) | Տարեկան բյուջեի մեջ համայնքից հատկացվող գումար (հազար դրամ) | Մեկ սանի հաշվով միջին ամսական ծախս (հազար դրամ) | Սաների միջին քանակը խմբերում |
|-------------------|------------|-------|-------|--------|-----------------------------|---|---|------------------------------|
| | Շինուհայրի | 4 | 85 | 11 | 13200.0 | 11280.0 | 14.1 | 21.3 |
| գ. Խոտ, փող. 3,30 | Խոտի | 1 | 29 | 4 | 4605.6 | 4029.6 | 14.4 | 29.0 |
| գ. Հարժիս | Հարժիսի | 1 | 20 | 3 | 3489.6 | 3057.6 | 15.9 | 20.0 |
| գ. Հալիձոր | Հալիձոր | 1 | 20 | 3 | 3453.6 | 3045.6 | 15.7 | 20.0 |
| գ. Տաթև | Տաթևի ՆՈՒՀ | 1 | 19 | 3 | 3633.6 | 3105.6 | 17.4 | 19.0 |
| Ընդամենը | | 8.0 | 173.0 | 24.0 | 28382.4 | 24518.4 | 14.9 | 21.6 |

Միսիան

| Հասցե | Անվ. | Խումբ | Սան | Հաստիք | Տարեկան բյուջե (հազար դրամ) | Տարեկան բյուջեի մեջ համայնքից հատկացվող գումար (հազար դրամ) | Մեկ սանի հաշվով միջին ամսական ծախս (հազար դրամ) | Սաների միջին քանակը խմբերում |
|-----------------------------|-------|-------|-------|--------|--------------------------------|---|--|---------------------------------------|
| ք. Միսիան, Միսակյան 7 | թիվ 1 | 4 | 101 | 21.75 | 27873.6 | 22047.0 | 25.1 | 25.3 |
| ք. Միսիան, Սպանդարյան 10 | թիվ 2 | 4 | 117 | 21.5 | 27933.6 | 22137.6 | 21.7 | 29.3 |
| ք. Միսիան, Չարենցի 8 | թիվ 3 | 4 | 124 | 22.5 | 28902.4 | 23318.9 | 21.2 | 31.0 |
| ք. Միսիան, Խանջյան 5 | թիվ 4 | 4 | 104 | 21.5 | 28357.5 | 22289.3 | 24.8 | 26.0 |
| Ընդամենը | | 16.0 | 446.0 | 87.3 | 113067.1 | 89792.8 | 23.0 | 27.9 |

Նույն մարզի այլ համայնքում՝ Տաթևում, 4 խումբ և 85 սան ունեցող մանկապարտեզում առկա է 11 հաստիք՝ կրկնակի պակաս, իսկ Լոռու մարզում՝ 18-23 հաստիք է:

1 մանկապարտեզ ունեցող համայնքների վերլուծությունը

Սյունիքի մարզում:

Սյունիքի մարզի 1 մանկապարտեզ ունեցող համայնքներ, որտեղ առկա է 1 խումբ:

| | Համայնք | հասցե | անվանում | Խմբերի քանակը | Սաների թիվը | Հաստիքների թիվը | Տարեկան բյուջեի մեծությունը | Տարեկան բյուջեի մեջ համայնքից հատկացվող ֆինանսավորման չափը |
|---|-------------|---|--|---------------|-------------|-----------------|-----------------------------|--|
| 1 | գ. Լեռնաձոր | գ. Լեռնաձոր, 3/1 | <<Լեռնաձորի մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 1 | 10 | 6 | 7930.0 | 7500.0 |
| 2 | գ. Արծվանիկ | գ. Արծվանիկ Վ.Սահակյան 21 | <<Արծվանիկի մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 1 | 20 | 4 | 5000.0 | 5000.0 |
| 3 | գ. Դավիթբեկ | գ. Դավիթբեկ, փող.1. նրբ. 5, 8 | <<Դավիթբեկի մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 1 | 13 | 5 | 3700.0 | 3700.0 |
| 4 | գ. Ծավ | գ. Ծավ, Ներքին Շիշկերտ թաղամաս. Փող. 4, 3 | <<Ծավի մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 1 | 10 | 5 | 3500.0 | 3350.0 |
| 5 | Տաթև | գ. Խոտ, փող. 3,30 | Սյունիքի մարզի Խոտի նախադպրոցական հաստատություն ՀՈԱԿ | 1 | 29 | 4 | 4605.6 | 4029.6 |

| | | | | | | | | |
|----|----------------|--|--|---|----|---|--------|--------|
| 6 | Գորիս | գ. Ներքին Խնձորեսկ, Կենտ. ճան., թաղ. 4, տուն 21 | Սյունիքի մարզի Ներքին Խնձորեսկի նախադպրոցական հաստատություն ՀՈԱԿ | 1 | 14 | 5 | 2576.8 | 2576.8 |
| 7 | Տաթև | գ. Հարժիս | Սյունիքի մարզի Հարժիսի համայնքի նախադպրոցական հաստատություն ՀՈԱԿ | 1 | 20 | 3 | 3489.6 | 3057.6 |
| 8 | Տաթև | գ. Հալիձոր | Հալիձոր գյուղական համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ | 1 | 20 | 3 | 3453.6 | 3045.6 |
| 9 | Տաթև | գ. Տաթև | Տաթևի ՆՈՒՀ | 1 | 19 | 3 | 3633.6 | 3105.6 |
| 10 | գ.Ույծ | գ. Ույծ, փող.5, 1/1 N 3 | <<Ույծի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ | 1 | 24 | 5 | 5400.0 | 4800.0 |
| 11 | գ.Աշոտավ ան | գ. Աշոտավան, 2 փող. 212 32/2 | Աշոտավան համայնքի <<Աշոտավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 1 | 20 | 6 | 5000.0 | 4500.0 |
| 12 | Գորայք | գ. Սառնակունք, փող.2, 3 | <<Սառնակունքի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> | 1 | 14 | 3 | 3324.0 | 3000.0 |

| | | | | | | | | |
|----------|-----------|---------------------------|--|---|-----|------|---------|---------|
| | | | ՀՈԱԿ | | | | | |
| 13 | գ.Աղիտու | գ. Աղիտու, փող. 1, 1 | Աղիտու համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ | 1 | 13 | 1.5 | 1269.3 | 1269.3 |
| 14 | գ.Կարճևան | գ. Կարճևան, 4-րդ փող. 8/1 | ՀՀ Սյունիքի մարզի Կարճևանի գյուղական մանկապարտեզ | 1 | 12 | 5 | 5349.0 | 5349.0 |
| Ընդամենը | | | 14 | | 238 | 58.5 | 58231.5 | 54283.5 |

Նույն մարզի տարբեր համայնքներում 1 խումբ ունեցող մանկապարտեզներում հաստիքների քանակները էապես չեն տարբերվում, սակայն անտրամաբանական է դրանց փոքր թիվը՝ 1.5 հաստիք 13 սանի դեպքում, 3 հաստիք 20 սանի դեպքում:

Սյունիքի մարզի 1 մանկապարտեզ ունեցող համայնքներ, որտեղ առկա է 2 խումբ:

| Հ/Հ | Համայնք | Հասցե | Անվանում | Խմբերի քանակը | Սաների թիվը | Հաստիքների թիվը | Տարեկան բյուջեի մեծությունը | Տարեկան բյուջեի մեջ համայնքից հատկացվող ֆինանսավորման չափը |
|-----|-------------|---------------------------------------|--|---------------|-------------|-----------------|-----------------------------|--|
| 1 | գ. Սյունիք | գ. Սյունիք, Վերին թաղ, 20 | <<Սյունիքի մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 2 | 28 | 8 | 10800.0 | 9880.0 |
| 2 | Գորիս | գ. Քարահունջ, փողոց 11, շենք 33 | Սյունիքի մարզի Քարահունջի նախադպրոցական հաստատություն ՀՈԱԿ | 2 | 36 | 10 | 8500.0 | 7500.0 |
| 3 | Տեղ | գ. Շինուհայր | Սյունիքի մարզի Կորնիձորի նախադպրոցական հաստատություն ՀՈԱԿ | 2 | 46 | 9.15 | 9800.0 | 9000.0 |
| 4 | գ.Բոնակոթ | գ. Բոնակոթ, Վ. Ոսկանյանի փող., 3 նրբ. | <<Բոնակոթի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ | 2 | 53 | 8 | 10800.0 | 9880.0 |
| 5 | գ.Անգեղակոթ | գ. Անգեղակոթ, փող. 3, 7 | <<Անգեղակոթի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ | 2 | 50 | 12 | 9680.0 | 8000.0 |

| | | | | | | | | |
|----------|----------|--|--|---|-----|-------|---------|--------|
| 6 | գ.Շաղատ | գ. Շաղատ, փող.1, 6 | <<Շաղատի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ | 2 | 45 | 9 | 9393.5 | 8039.0 |
| 7 | գ.Շաքի | գ. Շաքի, փող. 8, 3 | <<Շաքի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ | 2 | 30 | 7 | 6400.0 | 6400.0 |
| 8 | գ.Դարբաս | գ. Դարբաս փող.1, 18, գ. Շամբ փող.3, 27 | <<Դարբասի մանկապարտեզ>> ՀՈԱԿ | 2 | 33 | 5 | 6350.0 | 5600.0 |
| 9 | գ.Լեհվազ | գ. Լեհվազ, փող. 3, 1 | Սյունիքի մարզի Լեհվազի գյուղի մանկապարտեզ | 2 | 25 | 8 | 5397.0 | 5397.0 |
| Ընդամենը | | | 9 | | 346 | 76.15 | 77120.5 | 69696 |

Նույն մարզի տարբեր համայնքներում 2 խումբ ունեցող մանկապարտեզներում սաների կրկնակի տարբերության դեպքում հաստիքների քանակը նույնն է՝ 53 սանի դեպքում՝ 8 հաստիք, 25 սան՝ 8 հաստիք նույնպես, իսկ 50 սան ունեցող մանկապարտեզում հաստիքների քանակը առավելագույնն է տվյալ խմբատեսակի մանկապարտեզների մեջ՝ 12: Ընդ որում, 13 հաստիք առկա է նույն մարզի այլ համայնքում, որտեղ մանկապարտեզում 3 խումբ է և 90 սան (Գորիս Վերիշենի նախադպրոցական հաստատություն ՀՈԱԿ): Իսկ մեկ այլ համայնքում՝ Տաթևի «Սյունիքի մարզի Շինուհայրի նախադպրոցական հաստատություն ՀՈԱԿ»-ում 11 հաստիք է 4 խումբ և 85 սան ունեցող մանկապարտեզում:

Սյունիքի մարզի 1 մանկապարտեզ ունեցող համայնքներ, որտեղ առկա է 3 խումբ:

| Հ/Հ | Համայնքների անվանումը | հասցե | Նախադպրոցական ուսումնական հաստատության անվանումը | խմբի քանակ | Սաների թիվը | Հաստիքների թիվը | Տարեկան բյուջե (հազար դրամ) | |
|----------|-----------------------|---------------------------------|---|------------|-------------|-----------------|-----------------------------|--|
| | | | | | | | Տարեկան բյուջեի մեծությունը | Տարեկան բյուջեի մեջ համայնքից հատկացվող ֆինանսավորման չափը |
| 1 | Գորիս | Գ. Խնձորեսկ, փողոց 37, 34 շենք | << ՀՀ Սյունիքի մարզի Խնձորեսկի նախադպրոցական հաստատություն>> ՀՈԱԿ | 3 | 73 | 14 | 15150.0 | 12000.0 |
| 2 | Գորիս | Գ. Վերիշեն, 10-րդ փողոց, շենք 1 | Վերիշենի նախադպրոցական հաստատություն ՀՈԱԿ | 3 | 90 | 13 | 13789.4 | 13789.4 |
| Ընդամենը | | | 2 | | 163 | 27 | 28939.4 | 25789.4 |

Նույն մարզի Գորիսի տարբեր գյուղերի 3 խումբ ունեցող մանկապարտեզներում հաստիքների անհամաչափություն է առկա՝ 73 սան և 14 հաստիք, 90 սան՝ 13 հաստիք:

Սյունիքի մարզի 1 մանկապարտեզ ունեցող համայնքներ, որտեղ առկա է 4 խումբ:

| Հ/Հ | Համայնքների անվանումը | հասցե | Նախադպրոցական ուսումնական հաստատության անվանումը | խմբերի քանակ | Սաների թիվը | Հաստիքների թիվը | Տարեկան բյուջե (հազար դրամ) | |
|-----------------|-----------------------|----------------------------------|--|--------------|-------------|-----------------|-----------------------------|--|
| | | | | | | | Տարեկան բյուջեի մեծությունը | Տարեկան բյուջեի մեջ համայնքից հատկացվող ֆինանսավորման չափը |
| 1 | ք.Քաջարան | Ք.Քաջարան, Աբովյան փող., 8 | Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի N 1 մսուր-մանկապարտեզ | 4 | 95 | 26.5 | 47071.2 | 47071.2 |
| 2 | Տաթև | | Սյունիքի մարզի Շինուհայրի նախադպրոցական հաստատություն ՀՈԱԿ | 4 | 85 | 11 | 13200.0 | 11280.0 |
| Ընդամենը | | | | 2 | 180 | 18.75 | 60271.2 | 58351.2 |

Հաստիքների թիվը կրկնակից ավել է նույն մարզի տարբեր համայնքների սաների գրեթե նույն և խմբերի միևնույն քանակությամբ մանկապարտեզներում:

Մյունիքի մարզի 1 մանկապարտեզ ունեցող համայնքներ, որտեղ առկա է 8 խումբ:

| Հ/Հ | Համայնքների անվանումը | հասցե | Նախադպրոցական ուսումնական հաստատության անվանումը | խմբի քանակ | Սաների թիվը | Հաստիքների թիվը | Տարեկան բյուջե (հազար դրամ) | |
|----------|-----------------------|-------------------------|--|------------|-------------|-----------------|-----------------------------|--|
| | | | | | | | Տարեկան բյուջեի մեծությունը | Տարեկան բյուջեի մեջ համայնքից հատկացվող ֆինանսավորման չափը |
| 1 | ք.Մեղրի | ք.Մեղրի, Ադելյան փող. 5 | ՀՀ Մյունիքի մարզի Մեղրի քաղաքի մուր-մանկապարտեզ ՀՈԱԿ | 8 | 208 | 39 | 37684.0 | 29718.0 |
| 2 | ք.Ագարակ | ք.Ագարակ, Գ. Նժդեհ 1 | <<Ագարակ քաղաքի թիվ 1 մ/մանկապարտեզ >>ՀՈԱԿ | 8 | 192 | 47 | 54587.7 | 41000.0 |
| Ընդամենը | | | 2 | | 400 | 86 | 92271.7 | 70718 |

Նույն մարզի տարբեր համայնքներում 8 խումբ ունեցող մանկապարտեզներում հաստիքների քանակը տարբերվում է 8-ով, ընդ որում դրանք ավելի շատ են ավելի քիչ սան ունեցող մանկապարտեզում:

Ընդ որում այլ մարզի համայնքում (Վանաձորի թիվ 2 մանկապարտեզ) 207 սանի առկայությամբ 19 հաստիք է, իսկ Մալիտակ քաղաքի թիվ 2 մանկապարտեզում 187 սանի առկայությամբ 30 հաստիք է: Աբովյան քաղաքի թիվ 8 մանկապարտեզում նույնպես 8 խմբի և նույնիսկ 230 սանի առկայությամբ 35.8 հաստիք է:

Լոռու մարզ

2 ն ավել մանկապարտեզ ունեցող համայնքներ:

Վանաձոր քաղաքի մանկապարտեզների տվյալներ

| Հասցե | Անվ. | Խումբ | Ման | Հաստիք | Տարեկան բյուջե (հազար դրամ) | Տարեկան բյուջեի մեջ համայնքից հատկացվող գումար (հազար դրամ) | Մեկ սանի հաշվով միջին ամսական ծախս (հազար դրամ) | Սաների միջին քանակը խմբերում |
|----------------|--------|-------|-----|--------|-----------------------------|---|---|------------------------------|
| Մյասնիկյան 28 | թիվ 2 | 4 | 207 | 19 | 29151.0 | 24151.0 | 11,736 | 51,8 |
| Շիրակի խճ. 64 | թիվ 3 | 2 | 60 | 10 | 13396.0 | 11956.0 | 18,606 | 30,0 |
| Սայաթ-Նովա 18 | թիվ 4 | 2 | 60 | 10 | 1440.0 | 11331.0 | 2,000 | 30,0 |
| Մաշտոցի 7 | թիվ 5 | 5 | 168 | 22 | 35818.0 | 28618.5 | 17,767 | 33,6 |
| Նարեկացու 47 | թիվ 7 | 2 | 50 | 10 | 1680.0 | 1293.0 | 2,800 | 25,0 |
| Գորկու 9ա | թիվ 8 | 6 | 160 | 24 | 35647.0 | 29887.0 | 18,566 | 26,7 |
| Զուխաջյան 12ա | թիվ 10 | 2 | 66 | 12 | 17449.0 | 15049.0 | 22,032 | 33,0 |
| Զուխաջյան 18ա | թիվ 11 | 3 | 95 | 15 | 2194.0 | 18790.0 | 1,925 | 31,7 |
| Նալբանդյան 1/3 | թիվ 15 | 3 | 115 | 19 | 25695.0 | 20745.0 | 18,620 | 38,3 |
| Սուխումի 17 | թիվ 19 | 3 | 118 | 14 | 22846.0 | 18796.0 | 16,134 | 39,3 |
| Լազյան 32 | թիվ 24 | 4 | 139 | 23 | 32566.0 | 24384.0 | 19,524 | 34,8 |
| Հակոբյան 91ա | թիվ 28 | 3 | 64 | 13 | 20322.0 | 17172.0 | 26,461 | 21,3 |
| Շինարարների 91 | թիվ 30 | 4 | 161 | 19 | 29742.0 | 23742.0 | 15,394 | 40,3 |

| | | | | | | | | |
|-------------------------|--------|----|------|-----|----------|----------|--------|------|
| Ներսիսյան թաղ 6 | թիվ 31 | 4 | 140 | 19 | 28503.0 | 24303.0 | 16,966 | 35,0 |
| Տարոն 4 | թիվ 32 | 2 | 64 | 12 | 16979.0 | 14879.0 | 22,108 | 32,0 |
| Տարոն 2 ՔՇՀ 3 | թիվ 33 | 4 | 100 | 23 | 31491.0 | 26551.0 | 26,243 | 25,0 |
